ձեւական ցոյցերի դէմ։ Մոռացել են բողոքողները թէ՝ Ծաղկազարդի օրը Քրիստոս ինչ հանդէսով մտաւ Յերուսաղէմ։

ԺԱ. Բողոքում են օրհնած սուրբ իւղը—մեռոնը եկեղեցւոյ մէջ գործադրելու համար. մոռացել են Աստուծոյ պատուէրը Մովսէս մարգարէին տուած (Գիրք Ելից Լ. գլուխն). մոռացել են մեռոնի գործադրութիւնը Հին Ուխտի և Նոր Ուխտի եկեղեցւոյ մէջ. չէ՞ որ մեռոնը Հոգւոյն Սրբոյ շնորհաց արտաքին նշանն է։ Կարդա՛ ՂԳ. գլուխն Նարեկացւոյ։

Վերջապէս բողոքական հայերի բողոքն մեր եկեղեցւոյ դէմ այսպիսի խնդրոյ համար է, և ուրիշ զանազան առարկայից համար, որոց դէմը դրել են մեր եկեղեցւոյ պաշտպանք և ջատագովք, և վկայութեամբ Սուրբ Գրոց ցրել ու մերժել են նոցա պահանջները։

Խնդրոյն լուծումն ստանալ ցանկացողը թող կարդայ մեր Քրիստոնէական Վարդապետութիւն անուանեալ գրքերը, Աւետարանի մեկնութիւնները, Աստուածաբանութեան և Կրօնագիտութեան գրքերը, և յատկապէս Քննական Կրօնագիտութիւնն Սահակ քահանայի Կ. Պոլսեցւոյ, տպած ի 1874 ամի, Ներածութիւն Սուրբ Գրոց և ուրիշ կրօնական գրքեր։

Մինթէ առանց բողոքական լինելու՝ հայը չէ՞ կարող ամեն մի զեղծման համար խօսիլ, բողոքել և պահանջել. ուրեմն ինչ հարկ կայ եկեղեցին թողուլ, հեռանալ, և հեռուից պահանջներ անել իբրեւ օտարական և թշնամի։

Զամախւոյ հայ բողոքականների ի 1830 թուէն սկզբնաւորութեան, գործողութեան և յայսօր (1895) շարունակութեան նկարագրութիւնը և պատմութիւնը գրել է յայտնի վարժապետ պարոն Հայրապետն Ղուկասեանց Զամախեցին, և գիրքն անուանում է «Բողոքականութիւն Կովկասի Հայոց մէջ. Թիֆլիս, 1886», որիցեւ քաղելով Զամախւոյ բողոքականներին վերաբերեալ գրուածը համառօտութեամբ՝ արտագրեցի գրքիս մէջ ընթերցողաց տեղեկութեան համար։

Բայց ինչպէս քանիցս ասել եմ, և այժմ կրկնեմ, թէ 500 տուն Զամախեցիք շրջապատուած լինելով 5000 տուն պարսիկներով՝ ակամայ մոռացել էին հայութեան հոգին, և մի